

Արքայում Առաքելեան	.	.	55
Արքան Շիրմազանեանց	.	.	40
Ալէրսան Տէր Յակովբեանց	.	.	400
Դապար Մելիք Բարաջանեանց	.	.	7
Մահտեսի Ալէրսան Մահտեսի Պետրոսեան	.	.	40
Ասրի Մ. Պետրոսեանց	.	.	150
Մարգար Նազար Բէկեանց	.	.	40
Ալէրսան Սարգսեան Բժշկեանց	.	.	43
Յարութիւն Հայրապետեան	.	.	40
Դանիէլ Գրիգորեան	.	.	7
Զարարիա Խանակիեան	.	.	4
Դունկիանոս Գալստեան	.	.	5
Նիկողայոս Մելիք Բարաջանեան	.	.	40
Համբարձում Տէր Յովսէփեան	.	.	50
Սարդիս Մովսէսեան	.	.	20
Յարութիւն Գրոյեանց	.	.	5
Յակոբ Ճանիեանց	.	.	50
Կարապետ Յակովբեան	.	.	2
Գալուստ Նիկողայոսեան	.	.	2
Թովմաս Ա. Մահտեսի Անանեանց	.	.	20
Գումարն		2792	

Ա ՈՐ ՈՒԽԻՑԻ ԱԿԱՆՉԸ ԼՍԵԼՈՅ ԼՈՒԽԻՑ Ա:

### Պ. Ակայորդիք:

Մշակ լըագրի 33 թուոյն մէջ կարդալով  
ձեր տխուր դիտողութիւնները իշմիած-  
նայ նորակառոյց Ճեմարանի բացման ու  
Ծորագրի մասին՝ իրաւն ասեմ ևս ևս  
տխրեցայ. բայց չկարծես թէ այն դիտո-  
ղութեանց Ճշմարտութեանը համար, ոչ  
հապա անհնարին ցաւ տուաւ սրտիս այն՝  
որ քո խորհրդածութիւնները կծու եր-  
գիծաբանութեամբ զեղուն ու ակաղձուն  
լինելով՝ օտարազգուոյ համար նոյն իսկ  
չին ներելի, թող թէ ւայու մը համար,  
մանաւանդ Ակայորդի անուամբ կնքուած  
ւայու մը. . . .

Զեր այդ սկայական կամ որ նոյն է  
հսկայական յարձակման թղուկի մը ըրած  
աննշան շարժումէն կամ խլրտումէն ան-  
գօր եղածը ձեզ հասկացնելու համար, նա  
մանաւանդ աչքիդ առջեւ պատկերացնե-  
լու համար հոգւոյդ անբարեխնդրութիւնն  
ու կրից սաստկութիւնը, զոր բնականա-  
պէս թշնամական կիրքով լիցուած մար-  
դը ինքնին չտեսներ, գըհս առի ըրած  
խորհրդածութիւններդքննելու, թէեւ ա-  
նոնք աւելի արհամարհանաց արժանի էին  
քան եթէ քննութեան: Ուէկ գլխաւոր  
պատճառն ալ այն է՝ որ մեր միամիտ ազ-  
գայնոց ցոյց տամ թէ իրենց որդւոց հա-  
մար վեցամեայ աշխատանքով պատրաս-  
տուած հոգեսոր կերակրոյն (իմա Ճ'եմա-  
րանին) մէջ սիրտ խառնող սկայական  
ձանձ մի ընկած է, որպէս զի տակաւին  
չբացուած Ճ'եմարանին վերայ բզզող ու  
տզզող ձանձելիքն զգուշանան:

Այս, զգուշանան մեր խեղձ ազգայինք  
զորս վարձուած դրիչներ կամ անզործ  
թուղթ մրողներ, «Ազգին աչքը կրանամ  
ասելով՝ կառաջնորդեն ի մոլորութիւն  
մտաց և յանտարբերութիւն, գործունեայ  
անձանց վերայ կուգեն յուսահատութիւն  
բերել, մինչդեռ ու եթէ Ճ'եմարանի մը  
կառուցումը, այլ նոյն իսկ փոքրիկ զիւ-  
զակիսն դպրոցի մը, որ և իցէ ազգաշահ  
ձեռնարկի մը սկզբնաւորութիւնը, հարկ  
էր նոցա խրախուսել փոխանակ մտացածին  
թերութեանցը վերայ ծուռումուռ խոր-  
հրդածութիւններ զգայուելու:

Եւ նախ շատ անտեզի է առաջին զար-  
մանքդ, զոր ունեցած ևս պատուելի Ճ'ե-  
մարանի (մարդ կարծեցիր Ճ'եմարանը)  
Ծորագրին Պոլիս տպուելուն վերայ և ա-

նիրաւ հետզհետէ յայտնած տարակոյս ներդ՝քանի՞ որ այն Օբրագիրներէն միւնցին ժամանակ յուղարկուած են թէ ի Պօլիս՝ և թէ ի Ոռուսաստան կարեօր եղած անձանց \*): Աերեկի թէ Պկայորդւոյ գոյութեան վերայ Էջմիածինը տարակուած է՝ որ նմին չէ յուղարկած. նա մասնաւանդ ի՞նչ հարկ կայ այդ ծրագիրները բաժանելոյ կամ ի՞նչ վեստ նախ Պօլիս տպագրուածէն: Եւ միթէ Պօլսոյ Եղագայինք մտաւոր զարգացմամբ աւելի ստորի են Ոռուսաքնակ ազգայիններէն, և անկարով յերեան հանելու այն անյարմար կէտերը՝ զորս դու հօփայական աջօք տեսեր ես: Եւ եթէ ձեզ պէս բոլոր Ոռուսաստանի ազգայինք ևս իրօք տեսեր են անյարմար կէտեր յառաջ քան Շեմարանի բացուիլն, միթէ ձեր կարծիքով՝ Շեմարանի բացումը պիտի խափանե՞ն: Անոախ խորհրդածութիւն. . . .

Խնչու համար այդշափ ծանր քննութեան արժանի կտեսնեք, պարոն, Էջմիածնայ Շեմարանին Օբրագիրը. եթէ միայն անոր համար՝ որ կտարակուակիք թէ անով ձեր և ձեզ նման ոմանց յոյսը անկատար կմայ և Շեմարանը չկընար իրը առնե՞ր ու սկզբանապնաւ լինել Ուի՞ոյն Դարս Հայուսադանէ, ինչպէս որ կասէք յօդուածիդ մէջ, աւելորդ է տարակուակիլդ. վասն զի ամենայն ծշմարիտ Հայ իրաւունք ունի կարծել ու հաւատալ ևս թէ արդարե այն Շեմարանը ասկից համառօտ Օբրա-

գրով ևս կարող է համնիլ իւր նպատակին՝ զոր գուք չէք կամեցած հասկանալ, և իրօք Ոսկեգար կլինի մեր ազգայնոց համար եթէ անթերի իննահօք աւանդուելով Օբրագրին մէջ նշանակուած առարկաները՝ ելնեն ուսումնական ու լեզուադէտ կուսակրօն եկեղեցականներ, յորոց եթէ ի հնումն սկիզբն առաւ Հայկական գրականութեան ծագիումը, պատճառ մի չիայ ինորումն տարակուակելու թէ կարող է գարձեալ զրականութիւնը նոցա ձեռքով ընդունել վերակենդանութիւն. ուստի և բոլորովին աւելորդ զարդ են պարբերութեանդ վերջը կանգնած զարմացման ու հարցման եկամուտ նշանացոյցները, որոնք ժողովրդեան մէջ գտնուելով կարող են իմանալ ըստ ձեզ՝ նորա պիտոյքն ու ցաւերը են: Եւ որովհետեւ ձեզ համար մեծ միսիթարութիւն չէք համարում կուսակրօն եկեղեցականներ ունենալը ազգին մէջ, ես ձեր սրտին միսիթարութիւն տալու համար կհրաւիրեմ Օբրագրին 12րդ յօդ.ը ուշի ուշով ընթեանուլ կրկին և գտնել լիուլի միսիթարութիւն: Դորա մէջ ասուած է որ “ուսումնաւարտ աշակերտք կարող են լինել առ հասարակ եկեղեցական և նոյն խոկ ուսուցիչ,,:

Եւ միթէ կարելի՞ բան է Շեմարանէն ուսումը աւարտած որ և է աշակերտք բըւ-

(\*) Ինչպէս Արարատայ ընթերցողք կյիշեն՝ յիշեալ Ծրագիրը աղովքն հանգերձ արգէն հրատարակուած է Ամսագրոյս մէջ: Օ. Խ.

նութեամբ ընդունել ի կուսակրօնութիւն.  
շեմ կարծեր թէ դորս Պ. Եհ. Հիմնադրին  
նպատակն լինի Ազգին մէջ յակամացից  
բռնադառեալ բազմաթիւ կուսակրօն եկեւ  
զեցականներ տարածել: Դուք արդպէս կը  
կործէք, ինչպէս որ կերեկ ձեր գրու-  
թեան իմաստէն, իսկ թէ ի՞նչ բանի վե-  
րաց հիմնելով, այդ ինձ, գուցէ և ձեզ իսկ  
մնյաց է, ինձ յայտնի է այն՝ որ Հայկա-  
կան գրականութիւնը անկորուստ պահ-  
պանելու ու բարգուած վիճակի մէջ հաս-  
տառուն ունելու համար, նա մանաւանդ  
Խջմիածնայ Մայր Աթոռոյ պատուոյն ու  
փառացը, վիճակոց քահանայից ուսում-  
նասիրութիւնը արծարծելու ու Դոզու-  
ցաց յառաջադիմութեանը ելննպաստելու  
համար, ոչ եթէ այժմ, այլ միշտ հար-  
կաւոր ծանցուած են բարեկիրթ և ուս-  
եալ կուսակրօն եկեղեցականներ: Այս  
զիտաւորութիւնը ու կարծիքը միայն  
Գէորգ Գ. Պ. Եհափառ Աթոռողիկոսը է,  
ունեցած, զոր և յաջողութեամբ մտադիր  
կերեկ ի զուխ հանել, հապա Եկեղեկ ու  
Մատթէոս նախորդ Աթոռողիկոսներն եւ  
կրկնած են, որոնք չգիտեմ թէ ի՞նչ պատ-  
ճառաւ իրենց մտադրութիւնը իրագործել  
չեն կարողացած: Ինչպէս և իցէ, աւելի  
հաւանական չէ արժանաւ որ կուսակրօն  
եկեղեցականներէն յուսալն՝ է ըստ իս-  
չարոց լեզուի ու գրականութեան պահ-  
պանութիւնը քան եթէ քահանաներէն,  
որոց համար դուք ինքնին կվկայէք թէ  
զբաղուած են ժողովրդեան պիտոյքներու-  
վը, ապա ուրեմն դոքա աւելի յարմար և  
ընդունակ են ժողովրդեան բարոյական ու  
հոգեստ պիտոյքը հոգալու քան կուսակրօ-  
նից պէս վանքը փակուած մտանադրու-

թեան հետեւելու և ձեր ցանկացած Ու-  
կեղարը նորոգելու: \*)

Սաով միտք չունիմ բնաւ ձեզ հա-  
կառակելու թէ մեր ազգին հարկաւոր չեն  
ուսումնական քահանաներ. ընդ հակա-  
ռակն ես այն կարծիքէն եմ՝ թէ ոչ միայն  
քահանաներ, այլ նաև բանիքուն վարժա-  
պեաներ, աչքաբաց վաճառականներ, ու-  
սումնազարդ աշխարհականներ պատրաս-  
տելու հոմար առանձին առանձին դպրոց-  
ներու անհրաժեշտ պէտքը ի վաղուց հե-  
աէ զգալի եղած է մեզ համար, միայն ա-  
սոր համար հարկաւոր չէ միիթարութիւն  
չհամարիլ կուսակրօնից համար պատ-  
րաստած Շեմարանը ու ծանր քննու-  
թեան հարկ չէ ենթարկել անոր Օքագիրը,  
որ իւրհամառօտութեամբն եւ իւր օդուտ-  
ները կրնայ արտադրել Խջմիածնայ համար  
աշխատասէր Միարանութիւն մի, վիճակաց  
համար բարեկիրթ Հովհեներ, եկեղեցեաց  
ու ժողովրդեան համար ես բարոյական և  
հոգեոր դաստիարակներ պատրաստելով:

(\*) Մասկվացի Պ. Ակադեմիին եմթէ կամաւ . .  
չէր կուրացած, անշնչտ կունենէր Թիմա-  
կան Քարանոցները, որք Եկեղեցւոց համար  
քահանաներ պատրաստեց ընդհանուր պարտաւո-  
րութիւն ունին.ուրեմն Քահանայ քը պատշատելոյ  
միջոցները արգէն ի պատրաստի են և հետզհանէ  
կարդիւնաւորուեն:

Սմին նման՝ Պ. Ակադեմիութեաց միորը չէ զօրած  
կուսակրօն եկեղեցականաց մեր Ազգի մէջ անհ-  
ած բարձր և նուիրական գիրքը և պարտաւո-  
րութիւնքը հասկանալ ուստի նա և չէ կըսած  
կամ կըսել չէ իմացած նոցա (կուսակրօն եկե-  
ղեցականաց) բարոյական և մտաւորական զար-  
գացմանց կամ կառողութեանց ի վերին գիրազանց  
կամ արժանաւոր աստիճանի մէջ գտնուիլն վսեմ՝  
անհրաժեշտ և բազմօգուտ լինելու Ծ. Խ.

Հոգ չէ Ա անքի մէջ մնալը Վ արդապետին  
ու ըստ տէրութեան կանոնաց քաղաքին  
մէջ բնակութելու իրաւունք չունենալը, որ  
նորունական լուր է ինձ համար, բաւական  
է որ աշխատասիրութեան, ազգասիրու-  
թեան, անարատ բարյականութեան ըս-  
կրղենական չիմունքը ընդունած լինի Ճե-  
մարանէն:

Ճեր երկրորդ կէսն քննելին յառաջ  
կինդրեմ փոքր ինչ ականջ դնել իմ հե-  
տեւալ խորհրդածութեանը, որ գուցէ  
մեղմէ քո ազգային հոգեոր Ճեմարանին  
փիրայ ունեցած տիտոր գաղափարը և քեզ  
հետ ի միասին ազգայինք ևս խստապա-  
հանջ չլինին յանչափս հայկական Ճեմա-  
րանէ: Կէտն ալ ինքնիրեն կջթուի:

Եթէ ձեզ յայտնի է մեր ազգին այժ-  
մեան մատաւոր ու բարյական գօրութիւ-  
նը, ժողովրդեան ու վանօրէից նիւթական  
հարստութեան չափը, ուրեմն գլխովին  
անխոհեմութիւն է սպասել որ Ճայա-  
տանը կամ Խջմիածինը իւր ներկայ չա-  
փաւորութեամբը կարողանայ ազգին ընդ-  
հանրութեան համար այնպիսի կատարեալ  
Ճեմարան մի նուիրել, ինչպէս որ ունին  
ուրիշ հարուստ ու հզօր ազգերը, որոնք  
նոյնպէս ի սկզբան ի հարկէ մեզ պէս 23՝  
գուցէ և պակաս առարկաներով սկսած  
ին իրենց Ճեմարանին ընթացքը՝ և փո-  
խանակ ուսուցչապետներու շատացած են  
թիրես վարժապետներով և ժամանակը  
հետզետէ ի գուրս հանած է կատարեալ  
գիտնական անձինք՝ հմուտ աշխարհական  
ու եկեղեցական բարձրագոյն գիտու-  
թեանց, որոնք հետզետէ ուսուցչապե-  
տութեան, մազիսարդութեան և լի տիտ-

ղաները\*) ընդուներ են: Աւրեմն պէտք չէ  
երեակայէք, պարզն, թէ ձեր և մեր Մայր  
Խջմիածինը պիտի կրնայ պարծիլ իսկըզ-  
բան թէ ամենայն ուսմամբք և զիտու-  
թեամբք զարգարուած անստղիւա կու-  
սակրօն եկեղեցականներ պիտի արձակէ  
Ազգիս լրութեան, և պահանջին ար-  
ինչպէս վերը ասացի, անխօհեմութիւն է.  
Խոհեմութիւնն այսպիսի ժամանակը ըստ իս-  
խրախոյսն է ու ձեռնտուութիւնն: Օսոր  
օրինակ, տարակոյ չկայ որ կարօտ պիտի  
լինի նա զառաջինն քաջահմուտ ուսուց-  
չոց՝ քանի որ ուսումնական ազգասկրնե-  
րը գրով Ճայապատն, Ճայընի+, Յառաջա-  
ռէմունիւն կպոռան, իսկ ելթէ հարկաւորի  
հայրենեաց յառաջադիմութեանը համար  
փոքրիկ Ճառայութիւն մի նուիրել, գի-  
ցուք թէ ուսուցչութիւն կամ ուսուց-  
չապետութիւն, գիրը կիտիւն, Գող, Գող,  
1000, 2000, 3000 մանէթներ կպահան-  
ջեն, կամ թէ ձեզ նման սիրելի, եթէ ծանր  
շժուի ձեզ, յանօգուտս հեռուէն անյար-

(\*) Մի՞թէ սյսպիսի ահողոններ միայն կարող  
են ուսուցչոց և առ հասարակ մարդկութեան կա-  
րեար եղած արժանաւորութիւնքը կշռել և երաշ-  
եաւորել. մի՞թէ այսպիսի տիտղոսները ունեցող-  
ներ միայն ուսումնականապէս և գործնականապէս  
գիտեն ամեն կամ շատ բան և կարեն ըստ ար-  
ժանաւոյն զառաւանդել. և մի՞թէ սյսպիսի տիտ-  
ղոսները կրողներ միայն համանգամայն (մանաւո-  
րելով մեր խօսքը) քաջ զիտեն և կարեն մի ու-  
սումնական կամ Ճեմարան կառավարել և ար-  
շինաւորել . . . :

Բարէ՛ թողուցէք որ տիտղոսաւէրերը՝ տիտ-  
ղոսներով պարծենան. իսկ մեք իրական և բարձու-  
իւն առաջ առնեցու և բարձու անինուով շատաւար: Մեզ տիտղոսաւոր անձինքը հարկաւոր չեն . . . .  
Գողեց մարդիկը վնտումք և գտնեմք: Ա. Խ.

Հայ կեդրէց կիշմարհն, Ճանչ ունաս-ընեանէց  
կտեղաննօրա Ճեմարանին վերայ, կարծե-  
լով թէ սնուտի գատարկաբանութեամբ  
Ազգին կամ Խջմիածնայ օգուտ մը կը  
հասցընեն:

Չեն մտածեր թէ ինչպէս որ նաւապետ  
մը իւր նաւը ծովի ամենի ալեաց մէջ  
թողցընելէն յառաջ ճարտար նաւասահի-  
ներ, գործունեայ զեկավարներ ու ամենայն  
պարագայքը կողարաստել, որ անակնիալ  
փորձութեանց, ծովային յելուղակաց,  
յանկարծական փոթորիկներու առաջը  
կորողանայ առնել. այսպէս մեր Ազգին և  
Եկեղեցւոյ Հոգեոր Գլուխը և Տէրը ըստ  
չափուկարեաց հոգացած պէտք է լինի իւր  
դժուարագիրտն ջանիւք հիմնարկած Շե-  
մարանին ուսումնական ու տնտեսական  
պիտոյքը անթերի լեցընելու և իւր բա-  
րեսէր նպատակին հասնելու, որ է ճշմա-  
րիտ լուսաւորութիւն Ալուսակրօն Եկեղե-  
ցականաց Ազգին և պայծառութիւն Հա-  
յաստանիայց Ա. Եկեղեցւոյ: Տաղէ Տէրը  
պահողութիւն:

Եւ որովհետեւ ձեր վերջին բարեմաղ-  
թութիւնն ալ հսկայական է իւր երգի-  
ծարանական զօրութեամբը, կներէք ինձ  
ևս բարեմաղթել ձեզ համար, որ եթէ երբ  
և իցէ ընդունիք այս Ճեմորանի մէջ  
Ճարասասանութեան ուսուցչապետու-  
թիւնը, որոյ մէկ ճիւղին մէջ, և յանուա-  
նէ Երգիծարանութեան մէջ առանձին  
քանիքար ունինալիք կցուցընիք, շատ լաւ  
կընիք, որովհետեւ այդ առարկան պակաս  
երեցաւ օրագրին մէջ. դուք զայն ըն-  
դունելով նախ՝ 23 առարկան 24 ըրած  
կլինիք, երկըրորդ՝ մէկ ուսուցչապետ աւելի  
կլինիք Ճեմորանի մէջ, և երրորդ՝ անյարհար

ՀԱՅՈՒԹ ու ԵԱԿԱՐ +ՆԻՇ-ՆԻ-ՆԻ ի բաց թող-  
լով՝ ազգայնոց միաքը պղասորելէն գուցէ  
ձեռընթափ կլնիք։ Առ ժամս այսչափ։  
“Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուկիցէ,,,:  
ի և սպառապուտ։ ՀԱՅԿԱՐԴԻ.

Այսուսամբ որ՝ այս նամակէս Պ. Մշտին  
ևս կհասկանայ և կընդունի իւր բաժինը:

ԵՐԿՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՏԱՐԱՐԱԳԻ ՀԵՅՅՈՅ ԹԻՎԻՆԻ

Մեր ազգայինք՝ զանազան գաւառներ ցըւռած  
լինելով՝ ենթարկուած են և զանազան փոփոխու-  
թեանց, բայց որովհետեւ իմ նպատակ է քաղա-  
քիս երկսեռ ուսումնարանաց վերայ մասնաւոր  
խօսել, վասնորոյ կուղղեմ զրիչո նորա մերայ:

Թէլաւ՝ բաղկանալով Հայերից 800 տուն հասարակութիւննէ ունի երկու հոյաշէն ուսումնարան. որոց մինչը՝ կանուանի Ա. արդգանեան. Աւումնաբանարական սեռի, իսկ միւսը Գայիսանեան Աւումնաբան իգական սեռի, որք ունին անշարժ կազուածք՝ որ կօժանդակին տարիկան 700 ից 9 1000 ռոբին.

Բնակիչներից՝ ո՞ւ ոք չգիտէ հայերէն խօսիլ և  
զրել բացի քահանայից և . . . . այլ կիսօմին ա-  
մենքեան վրացերէն, զրեն ամեննեքեան վրացե-  
րէն. թէև ժողովրդականք ունին ըստ բաւականին  
ջերմեռանդութիւն առ եկեղեցին, (ինչպէս ամսոյս  
2ին երկու լնկեր փարթամ վաճառականք՝ Ըղոյ  
Գասպար տէր Սարգսեան և Աղայ Գասպար Մըդ-  
գեսեանց նուիրեցին տեղւոյս սուրբ Գէորգ աւագ  
եկեղեցւոյն՝ Մոսկովից բիրել տուած մի արծա-  
թեայ ոսկեզօծ ականակուռ սաղաւարտ, մի ոսկե-  
թել կերպասեայ խաս շուրջառ, ի նոյնոյ սեղանի  
ծածկոց մի փոքր ուրար և երկու ուրար, և եր-  
կու կապտագոյն ծաղկեայ ատլաս ժամաշապիկ,  
ընդ ամենի արժողութիւնն է չըրս հարիւր ուրբլի).  
բայց եթէ այս ջերմեռանդութեան համաձայն ու-  
նենալին խօսիլ և զրել հայերէն և եկեղեցական  
ժամասացութիւնը հասկանալ ըստ կարելոյն, ո՞չ յայնժամ  
ո՛ըքան գերազանց պիտի գտնուեին և  
նախանձելի բարեպաշտական գործովք. բայց այս  
կորմանէ բոլորամին գուրկ են, և սոյնգունակ